«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի № 3 որոշման քաղվածք

Նախագահ	Արա Մկրտչյան (ինքնաբացարկ)
Անդամներ	Ռուբինա Մխիթարյան
	Կարեն Ասատուրյան
	Թամարա Չախոյան

Բողոքարկման կոմիտեի նախագահ Արա Մկրտչյանը Բողոքի քննության հենց սկզբից ներկայացրեց ինքնաբացարկ՝ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով, այն է՝ հայտարարեց, որ անձամբ ճանաչում է Բողոքաբերին, և վերջինիս կողմից ներկայացված Բողոքի քննության ու դրա արդյունքում կայացվելիք որոշմանը հիշյալ հիմքով իր մասնակցությունը համարեց ոչ նպատակահարմար:

Նիստի նախագահող նշանակվեց ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի անդամ Կարեն Ասատուրյանը:

ՀՖՖ Բողոքարկման կոմիտեն քննության առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ նախագահի թեկնածու Արաս Օզբիլիզի (այսուհետ՝ Բողոքաբեր)՝ 25.12.2023թ.-ին թվագրված և 26.12.2023թ.-ին «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմարեպության (այսուհետ՝ ՀՖՖ) կողմից ստացված բողոքը (այսուհետ՝ Բողոք)՝ 23.12.2023թ.-ին տեղի ունեցած ՀՖՖ հերթական ժողովի 11-րդ օրակարգային կետում ներառված ՀՖՖ նախագահի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու շուրջ, և հիմք ընդունելով ՀՖՖ Կանոնադրության 62-րդ կետի 2-րդ ենթակետը, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 50-րդ հոդվածի 3- րդ, 5-րդ և 6-րդ մասերը՝ որոշեց.

1. Բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի հիմքով հարուցել բողոքարկման վարույթ:
2. Վարույթի հերթական համար նշանակել Բ-001:
3. Հանձնարարել ՀՖՖ կարգապահական գրասենյակին ծանուցել ՀՖՖ Գլխավոր քարտուղար Արթուր Ազարյանին սույն բողոքի մասին և խնդրել տրամադրել ընտրությունների ողջ գործընթացի վերաբերյալ կազմված արձանագրությունների, կայացված որոշումների, մասնակիցների դիմումների և դրանց պատասխանների պատճենները:
4. Հանձնարարել ՀՖՖ կարգապահական գրասենյակին ծանուցել ՀՖՖ Ընտրական կոմիտեի նախագահ Հարություն Բաղդասարյանին սույն բողոքի մասին և խնդրել տալ գրավոր դիրքորոշում Բողոքում նշված՝ ՀՖՖ Ընտրական կոմիտեի որոշումների և իրականացրած գործառույթների դեմ ներկայացված կետերի և դրանց հիմնավորումների վերաբերյալ, ինչպես նաև ՀՖՖ նախագահի 23.12.2023թ.-ին կայացած ընտրությունների ողջ գործընթացի վերաբերյալ կազմված արձանագրությունների, կայացված որոշումների, մասնակիցների դիմումների և դրանց պատասխանների պատճենները:
5. Հանձնարարել ՀՖՖ կարգապահական գրասենյակին ծանուցել Բողոքաբերին սույն որոշման վերաբերյալ:
6. Բողոքարկման մարմնի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:

Նիստի նախագահող՝

Կարեն Ասատուրյան

Digitally signed by
KAREN ASATURYAN 4010830662
Date: 2023.12.28 18:31:20